

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

ՈՐՈՇՈՒՄ
5 ՄԱՐՏԻ 2024, N 7 - 2

**«ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետը և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2024 թվականի գործունեության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Գիտական խորհրդի նիստը նախագահող՝
ռեկտորի պարտականությունները կատարող,
ուսումնական աշխատանքների
գծով պրոռեկտոր**

2024 թ. մարտի 5
Երևան



Ա. Վ. Գրիգորյան

Հավելված
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2024 թվականի մարտի 5-ի N 7 - 2 որոշման

**«ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրը մշակվել է՝ ելնելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 6-ի N 8 - 1 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2020-2024 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրի» ուղղություններից և գերակայություններից:

Գործունեության ներկայացվող ծրագիրը ծառայելու է որպես ընթացիկ տարվա համար նախատեսվող գործողությունների ուղեցույց: Այս առումով, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) 2024 թվականի տեսլականը հիմնված է այն համոզմունքի վրա, որ հետազոտությունները, վերլուծությունները և Համալսարանի ակադեմիական հանրային համատեղ ջանքերը կարող են դրական փոփոխություններ առաջ բերել ոչ միայն Համալսարանի, այլև Հայաստանի Հանրապետության համար: Որպես Համալսարանի հետազոտական առանցքային ստորաբաժանում, Կենտրոնը ձգտում է դառնալ փոխակերպող գաղափարների կուտակիչ և խթանիչ, որոնք դուրս են գալիս նեղ գիտակարգի շրջանակներից ու նպաստում են տեղական և գլոբալ հանրային առջև ծառայած հիմնախնդիրների լուծմանը:

2024 թվականի գործունեության ծրագիրը բյուրեղանում է հրատապ նշանակություն ունեցող առանցքային թեմաների շուրջ, որոնք համահունչ են մեր ժամանակի և մեր հանրապետության առջև ծառայած խնդիրներին: Միաժամանակ, Կենտրոնում առկա է

նաև արդի մարտահրավերները միջգիտակարգային մոտեցմամբ լուծելու հրամայականը, որը թույլ կտա առավել համակողմանի պատկերացնել հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման առավել գործուն դեղատոմսեր:

Որպես համալսարանական ուղեղային կենտրոն՝ վերոնշյալ որոշմամբ ամրագրված գերակայություններն իրագործելու նպատակով և հանրային քաղաքականությունը հետազոտող հաստատությունների ձևաչափով ու գործիքակազմով 2024 թվականին Կենտրոնը շարունակելու է իր մտավոր և կազմակերպական ներուժը ներդնել Համալսարանի հետազոտական կարողությունների զարգացման, ուսանողների հետազոտական հմտությունների ձևավորման, Հայաստանում հանրային քաղաքականության բարելավման, տնտեսագիտական հիմնախնդիրների վերաբերյալ հանրային կարծիքի ձևավորման և իրազեկման, ակադեմիական խոսույթի հարստացման և տարածման, նոր գաղափարների գեներացման, կիրառական և միջգիտակարգային ուսումնասիրությունների իրականացման գործում՝ կամրջելով գիտելիքն ու քաղաքականությունը և նպաստելով առավել անվտանգ, բարեկեցիկ և սոցիալապես արդար պետության կառուցմանը և կայուն զարգացմանը:

Հաշվի առնելով նախորդ տարիներին Կենտրոնի արձանագրած արդյունքները, հաջողությունները, կուտակած փորձն ու ձեռք բերած ակադեմիական հեղինակությունը, ինչպես նաև փորձագիտական և կազմակերպական ներուժն ու կարողությունները՝ 2024 թվականին Կենտրոնի հետազոտությունների առանցքում են լինելու հետևյալ հիմնախնդիրները՝

- տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրներ,
- Հայաստանի տնտեսության, այդ թվում՝ արդյունաբերական կարողությունների զարգացման հիմնախնդիրներ,
- մրցակցային միջավայրի զարգացման և կարգավորման խնդիրներ,
- ազգային և տարածաշրջանային անվտանգության հիմնահարցեր, Արցախյան հակամարտության տնտեսական հետևանքներ,
- ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ պայմանավորված՝ վերազգային կառույցներում ինտեգրման մարտահրավերներ և հեռանկարներ,

- փոփոխվող աշխարհակարգի պայմաններում ուժային կենտրոնների հետ երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման հնարավորություններ,
- Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի զարգացման հիմնահարցեր,
- սոցիալական քաղաքականության ուղղությունների զարգացման հիմնախնդիրներ:

Վերոնշյալ ուղղությունների հիման վրա Կենտրոնը նախատեսում է հասնել հետևյալ հիմնական արդյունքներին.

1. ՀՀ գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների, մասնավոր հատվածի, ինչպես նաև արտերկրի և հայրենական ուղեղային կենտրոնների հետ համագործակցության ամրապնդում և գործընկերային ցանցի ընդլայնում:
2. Քաղաքականություն մշակողների և իրականացնողների, որոշում կայացնողների, ակադեմիական հանրույթի, գործարար շրջանակների և լայն հասարակության շրջանում Կենտրոնի ճանաչելիության և հանրային քաղաքականությունում դերակատարության, ներգրավվածության ու ազդեցության բարձրացում:
3. Համալսարանում հետազոտական գործունեության ակտիվացում, այդ թվում՝ արտահամալսարանական միջոցների ներգրավման միջոցով:
4. Հետազոտական արդյունքների առևտրայնացում:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հրապարակման ենթակա հետազոտություններ

1.1. Մրցույթով, ներբուհական միջոցներով հետազոտություններ

Մրցույթով, ներբուհական միջոցներով հետազոտությունները կիրականացվեն Համալսարանի գիտական խորհրդի 2021 թվականի մարտի 2-ի N 8 - 3 որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և

խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգին» համապատասխան:

Մրցույթի թեմաները կորոշվեն հետևյալ կառուցակարգով. Կենտրոնի կողմից կիրականացվեն արտաքին և ներքին շահառուների հետազոտական կարիքների վերհանմանն ուղղված քննարկումներ, որոնց արդյունքների ամփոփմամբ կձևավորվեն առաջարկվող հետազոտական թեմաների ցանկը, դրանց արդիականության հիմնավորումները, կատարման ընթացքին, բովանդակությանը, հրապարակմանը, հանրայնացմանն առնչվող տեխնիկական առաջադրանքների նախագծերը և կներկայացվեն Կենտրոնի Փորձագիտական խորհրդի հաստատմանը: Կենտրոնի մասնագիտացման հիմնական բնագավառներն են. մակրոտնտեսական կայունության, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության, արտաքին հատվածի, ֆինանսական շուկաների և ինստիտուտների, մրցունակության, շուկաների, մրցակցության, գների և գնաճի, հանրային քաղաքականության, գործարարության, արտաքին տնտեսական հարաբերությունների, սոցիալական քաղաքականության, կրթական գործընթացի կազմակերպման և կրթական տեխնոլոգիաների հետ կապված, ինչպես նաև Հայաստանի և Համալսարանի զարգացման համար հրատապ, այդ թվում՝ միջգիտակարգային բնույթի այլ ուսումնասիրությունները:

Նախատեսվում է ներքին և արտաքին շահառուների կարիքների վերհանման և քննարկման արդյունքների հիման վրա մրցութային կարգով իրականացնել շուրջ 10 հետազոտություն:

Ընդ որում, նախատեսվում է մեկ հետազոտություն իրականացնել միջգիտակարգային թեմայով:

1.1.1. Հանրային քննարկումների անցկացում

2024 թվականին նախատեսվում է Հայաստանի Հանրապետության տնտեսության, անվտանգության և տարածաշրջանային նշանակության հարցերի, այդ թվում՝ Կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունների թեմատիկ ուղղվածությունից բխող խնդիրների վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում:

Մասնավորապես՝ կկազմակերպվի Կլոր սեղան-քննարկում, որի շրջանակներում կկայանա «ՀՀ տնտեսության առաջանցիկ աճի ուղղվածությունը. բժշկական ինդուստրիա» վերտառությամբ կոլեկտիվ մենագրության շնորհանդեսը, ինչպես նաև կկազմակերպվի

աշխատանքային քննարկում պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և գիտական ու փորձագիտական հանրային ներկայացուցիչների մասնակցությամբ:

1.1.2. Առանձին փաստերի վերաբերյալ անիմացիոն հակիրճ հոլովակներ

Ուղեղային կենտրոնների միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրականացվող հետազոտությունների, վերլուծությունների և դրանց արդյունքների նկատմամբ հանրության ուշադրությունը գրավելու, դրանք առավելագույնս հանրայնացնելու և, այդպիսով, Կենտրոնի ճանաչվածությունն ու ազդեցությունը մեծացնելու համար լայնորեն կիրառվում է վիզուալացման, այդ թվում՝ անիմացիոն կարճ հոլովակների պատրաստման և թողարկման պրակտիկան:

1.2. Միջազգայնացում և արտաքին միջոցների ներգրավմամբ հետազոտություններ

Ներկայիս փոխկապակցված դարաշրջանում համագործակցությունը առաջընթացի անկյունաքարն է: Ներկայացվող ծրագիրն ընդգծում է Կենտրոնի հանձնառությունը՝ ձևավորելու փոխշահավետ գործընկերություններ և՛ Հայաստանում, և՛ արտերկրում: Զարգացնելով համագործակցությունը ակադեմիական և գործարար շրջանակների, պետական կառույցների հետ՝ Կենտրոնը ձգտելու է մեծացնել իրականացվող հետազոտությունների ազդեցությունը և Համալսարանի ճանաչվածությունը:

2024 թվականին Համալսարանի ֆոնդահայթայթման և գործառույթային առնչություն ունեցող այլ ստորաբաժանումների հետ համագործակցաբար նախատեսվում են շարունակել հետևյալ աշխատանքները՝

- ուսումնասիրել գործընկեր հաստատությունների հետազոտական հիմնական ուղղությունները,
- առանձնացնել Համալսարանի մասնագիտացմանը համապատասխանող հետազոտական ուղղությունները՝ հստակեցնելով արտերկրի գործընկերների հետ համատեղ հետազոտությունների իրականացման թեմատիկան,
- բացահայտել գործընկեր հաստատությունների միջոցների ներգրավմամբ համատեղ հետազոտությունների իրականացման հնարավորությունները,

- հետևել ազգային և օտարերկրյա հիմնադրամներից հետազոտական դրամաշնորհների ստացման հնարավորություններին,
- ձևավորել թիմեր որոշակի թեմաներով դրամաշնորհային հայտերի նախապատրաստման համար,
- ուղեղային կենտրոնների միջազգային ցանցերին անդամակցության ընդլայնում և թեմատիկ գիտաժողովներին, աշխատաժողովներին մասնակցություն:

1.3. «Ամբերդ» տեղեկագրի պարբերական հրապարակում

2019 թվականի դեկտեմբերից առ այսօր լույս է տեսել «Ամբերդ» տեղեկագրի (այսուհետ՝ Տեղեկագիր) 25 համար: Տեղեկագիրը հրապարակվում է տարեկան 6 անգամյա պարբերականությամբ: Բացի այդ, ըստ անհրաժեշտության, լույս են տեսնում նաև հրատապ նշանակություն ունեցող իրադարձություններին նվիրված հատուկ համարներ:

2024 թվականին նախատեսվում է շարունակել սկիզբ առած գործընթացը՝ պահպանելով մեկական անգլերենով և ռուսերենով համարների հրապարակման փորձը, ինչը մեծապես կարևոր է Կենտրոնի միջազգայնացման և արտերկրի լսարանին Կենտրոնի մտավոր արտադրանքն առավել հասանելի դարձնելու համար: Ձևավորված ավանդույթի համաձայն՝ 2024 թվականին Տեղեկագրի հոդվածների առանցքում կլինեն գլոբալ նշանակության, Հայաստանի տնտեսության և հանրային քաղաքականության տարբեր ոլորտներին առնչվող արդիական և հրատապ խնդիրները, որոնք հիմնված լինելով փաստերի և փորձագիտության վրա՝ հանրամատչելի ձևաչափով կներկայացվեն լայն հանրությանը: Տեղեկագրի հրապարակման շարունակականության ապահովումը կնպաստի Համալսարանի և Կենտրոնի ճանաչվածության, հեղինակության և ազդեցության մեծացմանը, ակադեմիական խոսույթի զարգացմանը, Հայաստանի առջև ծառայած մարտահրավերների բացահայտմանն ու դիմագրավմանը, ինչպես նաև տարբեր գաղափարների գեներեցման և զարգացումների տարբեր սցենարների մշակմանը:

Նախորդ տարիներին Տեղեկագիրը ներառվել է «Կիբեռլենինկա» (Cyberleninka) բաց հասանելիության գրադարանում, ինչը հետազոտողների շրջանում բարձրացրել է ոչ միայն տեղեկագրի, այլև Համալսարանի և Կենտրոնի ճանաչվածությունն ու ազդեցությունը և ապահովել Կենտրոնի սեփական ներդրումը բաց գիտության (Open Science) հարացույցի

գարգացման գործում: Տեղեկագիրը հասանելի է նաև eLIBRARY գիտատեղեկատվական հարթակում:

1.4. Կենտրոնի ճանաչելիության բարձրացում

2024 թվականին նախատեսվում է շարունակել աշխատանքները միջազգային գիտատեղեկատվական և համացանցային տարաբնույթ մասնագիտացված շտեմարաններում Կենտրոնի և դրա հետազոտական արտադրանքի գրանցման, տեղեկատվության պարբերական թարմացման և գործընկերային ցանցի ընդլայնման ուղղությամբ:

2024 թվականի համար նախանշված քայլերից հարկ է առանձնացնել՝

- Կենտրոնի պաշտոնական կայքի գործարկում,
- սոցիալական ցանցերում Կենտրոնի ներկայացվածության ընդլայնում,
- ԶԼՄ-ների հետ համագործակցության ակտիվացում,
- Կենտրոնի տարբերանշանով promo-նյութերի (գրիչ, նոթատետր և այլն), բուկլետների պատրաստում և տարածում:

Մասնավորապես՝ նախորդ ժամանակաշրջանում Կենտրոնի կայքի ստեղծման ուղղությամբ սկսված աշխատանքները կամփոփվեն 2024 թվականին: Կայքի գործարկումից հետո նախատեսվում է ներդնել նաև Կենտրոնի հետազոտողների պատրաստած վերլուծական աշխատանքների նոր ձևաչափեր, այդ թվում՝ հանրային հնչեղություն ստացած և հրատապ հարցերի վերաբերյալ փորձագիտական հակիրճ մեկնաբանությունների հրապարակման տեսքով:

2024 թվականին աշխատանքները շարունակվելու են նաև արդեն տարիներ շարունակ հաջողությամբ գործող Facebook, LinkedIn, Twitter սոցիալական ցանցերում և Telegram հարթակում ներկայացվող կոնտենտի նոր ձևաչափերի ներդրման և այդ էջերի հետևորդների ընդլայնման ուղղությամբ:

Կենտրոնը 2024 թվականին նախատեսում է շարունակել «Նոյյան Տապան» և «Արմենպրես» լրատվական գործակալությունների հետ ձևավորված փոխշահավետ համագործակցությունը, ինչպես նաև քայլեր ձեռնարկել այլ լրատվամիջոցների հետ արդյունավետ փոխգործակցության հաստատման ուղղությամբ:

Մասնավորապես՝ նախատեսվում է.

1. Պահպանել «Նոյյան Տապան» լրատվական գործակալության հետ թողարկվող «Ամբերդ. Քրոնիկոն» հաղորդաշարը (տարեկան 10 հաղորդում), որին մասնակցություն են ունենում Կենտրոնի փորձագետները:
2. Կազմակերպել «Ամբերդ. SWOT» հաղորդաշարի թողարկումը՝ տարեկան 6 անգամյա պարբերականությամբ, որի շրջանակներում նախատեսվում է հանրային լսարանին ներկայացնել ինչպես ոլորտի հայտնի մասնագետների մոտեցումները, այնպես էլ Տեղեկագրում ամփոփված առավել հրատապ թեմաներով հոդվածները,
3. Կենտրոնի ճանաչելիության և հանրային ազդեցության մեծացման նպատակով նախատեսվում է հեռուստաընկերությունների հետ քննարկել Կենտրոնի ներկայացուցիչներից պարբերաբար փորձագիտական մեկնաբանություն ստանալու հարցը: Նախատեսվում է 2024 թվականին հեռուստատեսությամբ և ԶԼՄ այլ միջոցներով ներկայացնել 100-ից ավելի փորձագիտական գնահատականներ և հարցազրույցներ:

2. Արտաքին միջոցների ներգրավմամբ կրթական ծրագրերի մշակում և համակարգում

Գիտակրթական ծրագրերի ֆոնդահայթայթման համար Համալսարանի ֆոնդահայթայթման բաժնի հետ համատեղ նախատեսվում է.

- Մշակել Erasmus+ բուհերի կարողությունների զարգացման ծրագրի առաջարկ՝ բուհի երիտասարդ հետազոտողների ներուժի իրացումը խթանելու նպատակով:
- Դիմել Շվեդական ինստիտուտի (Swedish Institute) ֆինանսավորմանը՝ մշակելով հայ-շվեդական համատեղ ծրագիր հետազոտությունների միջազգայնացման ուղղությամբ: Նմանատիպ ծրագիր արդեն հաջողությամբ իրականացվել է, որի արդյունքում մշակվել է գիտության միջազգայնացման հայեցակարգ: 2-րդ փուլով նպատակ է դրվել ապահովել ծրագրի շարունակականությունը և իրականացնել նախանշված աղյուսները:

- Դիմել Նորարարության և տեխնոլոգիայի եվրոպական ինստիտուտի (European Institute of Innovation and Technology) դրամաշնորհին: Առաջարկվելու է իրականացնել նախագիծ, որի նպատակը նորարարության վրա հիմնված հետազոտական ծրագրերի խթանումն է:

3. Վճարովի հիմունքներով փորձագիտական գործունեություն

Կենտրոնն իր ներուժը լիարժեք իրացնելու և գործունեության արդյունքներն առևտրայնացնելու նպատակով կարող է վճարովի հիմունքներով մատուցել փորձագիտական ծառայություններ տարբեր հաստատություններին և անհատներին հետևյալ հիմնական ուղղություններով՝

- փորձագիտական գնահատում հաշվապահական հաշվառման ոլորտում,
- փորձագիտական գնահատում հարկային ոլորտում,
- ֆինանսատնտեսական գնահատում,
- բիզնես-պլանների կազմում,
- ֆինանսավերլուծական փորձաքննություն,
- ֆինանսավարկային վիճակի գնահատում,
- գնահատման (արժեքի որոշման) ծառայություն,
- արտահանման շուկաների ուսումնասիրություն՝ ըստ կոնկրետ ապրանքատեսակների,
- ներմուծման շուկաների ուսումնասիրություն՝ ըստ կոնկրետ ապրանքատեսակների,
- մասնագիտական խմբագրական ծառայություններ:

Փորձաքննությունները կարող են իրականացվել հետազոտական և գործնական բազմամյա փորձառություն ունեցող մասնագետների ու փորձագետների կողմից (գիտական աստիճան և (կամ) միջազգային համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ):

Այս առումով, 2024 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝

- թարմացնել Կենտրոնի և Համալսարանի ակադեմիական կազմի ներկայացուցիչներից կազմված փորձագետների ցանկը,
- հաշվի առնելով փորձագետների մասնագիտական կարողություններն ու փորձառությունը՝ նրանցից յուրաքանչյուրի համար հստակեցնել մատուցվող փորձագիտական ծառայությունների հնարավոր ցանկը,
- ճշգրտել մատուցվող փորձագիտական ծառայությունների ցանկը՝ ըստ կարողությունների գնահատման արդյունքների,
- իրականացնել մատուցվող ծառայությունների գնանշում,
- Համալսարանի և (կամ) Կենտրոնի կայքում տեղադրել համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկ ուղարկել շահագրգիռ մարմիններին:

4. Այլ հետազոտություններ

4.1. Համագործակցություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ

Կենտրոնի հետազոտական ուղղությունների շրջանակներում իրենց գործառույթներին առնչվող հետազոտական թեմաներ ներկայացնելու համար Համալսարանը համապատասխան առաջարկներով դիմել է՝

- ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- ՀՀ առողջապահության նախարարություն,
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
- ՀՀ ֆինանսների նախարարություն,
- ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով:

Հետազոտական թեմաներն ամբողջացնելուց, համապատասխան շահառուների հետ քննարկելուց հետո դրանք կներկայացվեն Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը և սահմանված կարգին համապատասխան կհայտարարվեն մրցույթներ:

Արդեն իսկ ստորագրված հուշագրերի շրջանակներում կշարունակվի տարբեր ձևաչափերով համագործակցությունը Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի գրասենյակի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ինչպես նաև այլ հաստատությունների հետ:

Համագործակցության առաջնահերթ ուղղություն կդիտարկվի նաև Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրերի և ռազմավարությունների իրականացման նկատմամբ մշտադիտարկումը և բարելավման ուղղությամբ առաջարկների ներկայացումը, ինչպես նաև հանրային քաղաքականության մարտահրավերների ուսումնասիրությունը: Կենտրոնի կողմից առանձնահատուկ ուշադրության կարժանանան ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության կողմից ներկայացված՝ հանրային հնչեղություն ստացած իրավական ակտերի նախագծերը:

4.2. Մասնավոր պատվերով հետազոտություններ

Կենտրոնի հեղինակության բարձրացման, ինչպես նաև արտաքին մասնավոր շահակիցների որոնման դաշտում Կենտրոնի հետազոտական առաջարկի առավել արդյունավետ դիրքավորման նպատակով 2024 թվականին անհրաժեշտ է լուծել Կենտրոնի սեփական կայքի ձևավորման, ինչպես նաև «Սփյուռ» և այլ մասնագիտացված հարթակներում Կենտրոնի հետազոտական առաջարկի փաթեթի ձևավորման և պատշաճ ներկայացման խնդիրները:

Հաշվի առնելով, որ տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի առավել արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն պետություն-գիտություն-մասնավոր հատված համագործակցությամբ՝ ուղղված ֆինանսական գործիքների ներդրմանը, կառավարման համակարգերի բարելավմանը, արտադրական կարողությունների ընդլայնմանը, տնտեսության արտադրողական ներուժի

զարգացմանը, տեխնոլոգիական առաջընթացին և օտարերկրյա ներդրումների խթանմանը, Կենտրոնը կարող է մշակել և ներկայացնել պետություն-մասնավոր հատված համագործակցության ծրագրերի նախագծեր:

4.3. Ներբուհական օգտագործման հետազոտություններ և կոլեկտիվ մենագրություններ

2024 թվականին նախատեսվում է շարունակել Կենտրոնի կողմից ներբուհական նշանակության հետազոտությունների իրականացումը: Այս նպատակով նախատեսվում է իրականացնել 1-2 հետազոտություններ:

2024 թվականին նախատեսվում է Կենտրոնի աշխատակազմի և փորձագետների ուժերով հրապարակել 3 կոլեկտիվ մենագրություն, որոնք նվիրված կլինեն Ադրբեջանական Հանրապետության պետական կառավարման և տնտեսական համակարգերին, Հնդկաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի հարաբերությունների խորացման հեռանկարներին և հիմնական մարտահրավերներին:

5. Կենտրոնի լաբորատորիաների գործունեություն

«Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի մասով՝

1. Հետազոտական ուղղություններ

2024 թվականին լաբորատորիայի աշխատանքներն իրականացվելու են հետևյալ հետազոտական ուղղություններով.

- 1) Հետազոտել տնտեսության թվային փոխակերպման, նորագույն տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից պարադիգմը ներկայացնող տեխնոլոգիաների (արհեստական բանականություն, բլոկչեյն տեխնոլոգիաներ, կենսատեխնոլոգիաներ, նանոտեխնոլոգիաներ, գենային ինժեներիա, իրերի ինտերնետ, խելացի կենցաղային տեխնոլոգիաներ, ամպային տեխնոլոգիաներ

և այլն) բնույթն ու տնտեսական հնարավոր ազդեցություններն ու կիրառությունները:

- 2) Ուսումնասիրել թվային տեխնոլոգիաների ու նորարարական լուծումների ազդեցությունները տնտեսության ճյուղային, վերարտադրական, տարածական կառուցվածքի փոփոխությունների տեսանկյունից, բացահայտել այդ բնագավառում առկա նոր միտումներն ու օրինաչափությունները:
- 3) Հետազոտել թվային տեխնոլոգիաների ու նորարարական լուծումների ազդեցությունները աշխատանքի և զբաղվածության ոլորտների վրա, բացահայտել այդ բնագավառում դրսևորվող նորագույն երևույթները, ստեղծվող նոր մասնագիտությունները, առկա (ավանդական) մասնագիտությունների կերպափոխումների միտումները, ինչպես նաև այն զբաղմունքներն ու մասնագիտությունները, որոնք առաջիկա ժամանակահատվածում կդադարեն լինել կենսունակ ու կանհետանան աշխատանքի շուկայից:
- 4) Ուսումնասիրել և գնահատել թվային լուծումների և նոր տեխնոլոգիաների ազդեցություններն աշխատանքի արտադրողականության բարձրացման և ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման սխեմաների բարելավման տեսանկյունից, իրականացնել այդ ասպեկտների գծով միջազգային համադրումներ և վերլուծություններ ինչպես համադրելի, այնպես էլ զարգացած երկրների տնտեսությունների հետ:
- 5) Ուսումնասիրել նոր տեխնոլոգիաների, ցանցային պրոդուկտների և թվային լուծումների առաջ բերած նոր հնարավորությունները ռեսուրսների մատչելիության, բիզնեսի նախաձեռնությունների ու ակնկալիքների ձևավորման ու իրացման տեսանկյունից, բացահայտել այդ բնագավառում առկա խնդիրներն ու մարտահրավերները:
- 6) Ուսումնասիրել մակրոտնտեսական հիմնական ցուցիչների վրա տնտեսության տեխնոլոգիական փոխակերպման ազդեցությունների գնահատման հիմնախնդիրները:

- 7) Հետագոտել նորարարական ձեռնարկատիրության խթանման գործիքակազմերի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Հետագոտություններից ակնկալվող հրապարակումներ: Նախատեսվում է դիտարկվող ժամանակահատվածում հրապարակել.

1. 10 գիտական հոդված, որից 4-ը՝ Scopus գիտատեղեկատվական շտեմարանի ազդեցության գործակից ունեցող ամսագրերում և հրատարակչական այլ հանդեսներում (գրքի գլուխների տեսքով):
2. Հրապարակել 4 հոդված միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում:
3. Նախապատրաստել և հրապարակման ներկայացնել մեկ կոլեկտիվ մենագրություն ՀՀ տնտեսության տնտեսական բարդության, դիվերսիֆիկացման և տեխնոլոգիական փոխակերպման հիմնախնդիրների վերաբերյալ:

2. Գիտաուսումնական գործունեություն

Մշակել, նախապատրաստել ու հրապարակման ներկայացնել նորարարությունների և ինստիտուցիոնալ տնտեսագիտության դասավանդման ծրագրերին անհրաժեշտ հայալեզու 2 ուսումնական ձեռնարկ՝ «Նորարարության տնտեսագիտություն» և «Ինստիտուցիոնալ տնտեսագիտություն» (բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների համար):

3. Հանրային իրազեկում, տեղեկատվության մշակում, հանրայնացում և փորձագիտական գործունեություն:

- 1) Աշխատանքներ իրականացնել լաբորատորիայի հենքի վրա մշակված և ՀՊՏՀ կայքէջում զետեղված «Հայաստան. ինովացիոն և ինստիտուցիոնալ զարգացումներ» երկլեզու (հայերեն, անգլերեն) գիտահանրամատչելի պարբերականի նոր համարի նախապատրաստման և հրապարակման համար:

- 2) Աշխատանքներ իրականացնել ոլորտին առնչվող վիճակագրական տեղեկատվական շտեմարանի ձևավորման և լաբորատորիայի կայքէջում զետեղման ուղղությամբ:

4. Միջազգային համագործակցություն և արտաքին միջոցների ներգրավմամբ հետազոտություններ

- 1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Շտուտգարտի «Հոհենհայմ» համալսարանի Նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Անդրեաս Պիկայի հետ մշակել և Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայություն (DAAD) ֆինանսավորման ներկայացնել «Էներգետիկ համակարգի տեխնոլոգիական փոխակերպումը տնտեսական բարդության ժամանակակից համադրույթի շրջանակներում» թեմայով մրցութային դրամաշնորհային ծրագիրը:
- 2) Մշակել և ՀՀ ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն կրթության թեմատիկ ֆինանսավորման դրամաշնորհային մրցութին ներկայացնել արտասահմանյան գործընկերոջ (խորհրդատուի) (ՌԴ Սանկտ-Պետերբուրգի ITMO համալսարանի Նորարարությունների և տեխնոլոգիական մենեջմենտի ֆակուլտետի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր Իրինա Սերգեևա) ներգրավմամբ մրցութային նախագիծ «Բնակչության կենսամակարդակի վրա տնտեսության թվային փոխակերպման և տեխնոլոգիական արդիականացման ազդեցությունների գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

«Տնտեսության անորոշություն մոդելավորում» լաբորատորիայի մասով՝

Նախատեսվում է 2024 թվականին հրապարակել՝

- մեկ հոդված դրամավարկային քաղաքականության թեմայով,
- 2 հոդված արտաքին առևտրի թեմայով,
- մեկ հոդված ժողովրդագրության թեմայով:

Վերը նշված հոդվածներից 2-ը կիրառարակվեն Scopus գիտատեղեկատվական շտեմարանի ազդեցության գործակից ունեցող ամսագրերում և (կամ) հրատարակչական այլ հանդեսներում (գրքի գլուխների տեսքով):

Նախատեսվում է նաև մասնակցություն 2 գիտաժողովի, ինչպես նաև ավելի քան 15 վերլուծական հոդվածներ, որոնք կիրառարակվեն ՋԼՄ կամ առցանց հարթակներում:

6. Դասընթացների անցկացում

2024 թվականին նախատեսվում է կազմակերպել թեմատիկ դասընթացներ: Կախված թեմատիկ ուղղվածությունից՝ դասընթացների թիրախային լսարանը կարող են լինել ուսանողները, ակադեմիական կազմի ներկայացուցիչները, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման ոլորտի, մասնավոր հատվածի շրջանակները և այլն:

Անհրաժեշտության դեպքում կկազմակերպվեն նաև տնտեսագիտական և միջգիտակարգային թեմաներով բանավեճեր և քննարկումներ:

7. Տվյալների շտեմարանի ստեղծում

2024 թվականին նախատեսվում է գործարկել տվյալների շտեմարանը, որը հնարավորություն կտա Համալսարանի բոլոր շահառուներին անվճար օգտվել համաշխարհային տնտեսությանը և Հայաստանի տնտեսությանը վերաբերող լայնածավալ տեղեկատվական ռեսուրսից և այդ տվյալների հիման վրա իրականացնել հետազոտություններ: Տվյալների բազան իրենից կներկայացնի վիճակագրական տվյալների մուտքագրման, պահպանման, ելքագրման և գրաֆիկական պատկերների կառուցման հարթակ, եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) աշխատելու հնարավորությամբ:

Հարթակը բաղկացած կլինի 3 հիմնական բաղադրիչներից՝ Հանրային համակարգ, Կառավարման համակարգ և Օգտատիրոջ համակարգ: Տվյալների հետագա մուտքագրման աշխատանքները կապահովվի Կենտրոնի ուժերով:

